

20

ԷԴՎԱՐԴ ԽԼՂԱԹՅԱՆԻ ՀՈԳՈՒ ԿԱՆՉՆ ՈՒ ԵՐԱՆՏԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Խնձորուտ թաղամասի կողմից քաղաքի մուտքի մոտ անձնակազմին աղ ու հացով դիմավորեցին ազգային տարազներով գեղանի աղջնակները: Հայրենաշունչ միջոցառում էր կազմակերպված, որին մասնակցելու էին եկել հարյուրավոր վանածորցիներ: «Կիլիկիա»-ցիներին մեծարելու էին եկել ոչ միայն մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, այլև հյուրեր հանրապետության մյուս քաղաքներից, մտավորականներ, մշակույթի մշակներ, լրագրողներ:

Հյուրերին ողջունեց և օրվա կապակցությամբ բարեմաղթեց Լուու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, նշելով, որ վանածորցիների հոգին այսօր ուրախությամբ է համակված՝



իրենց քաղաքում ընդունելով այսպիսի հերոսների, որ քաղաքի առօրյայում արձանագրվում է պատմական երևույթ:

Ողջունեցին և ոգեկոչման ու ոգեշնչման խոսքեր ասեցին Էդվարդ Խլղաթյանը, գրողներ Գագիկ Շիրմազանը, Հրաչ Սարուխանը, արձակագիր Վալտեր Թորոսյանը, «Հայփոստ» Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Թոմ Գևորգյանը: Վանածորի Ազատ Խլղաթյանի անվան N18 դպրոցի տնօրեն Արմեն Մարաբյանը ուղերձ հղեց նավապետ Կարեն Բալայանին, կոմիսար, տարեգիր, բժիշկ Ջորի Բալայանին, նավապետ-խորհրդատու Սամվել Կարապետյանին, անձնակազմի մյուս անդամներին. «Մեծարգո հյուրեր, «Կիլիկիա» առագաստանավի հերոսական անձնակազմ, հարգելի Ջորի Բալայան, ուրախ եմք, որ Ձեր ձեռնարկումը երջանիկ ավարտ ունեցավ, այն հայոց պատմության հերթական էջն է, որի բովանդակությունը առիթ է ճանաչելու և մտորելու համամարդկային, ազգային արժեքների շուրջ:

Դրանք են հարգանքը մարդու հանդեպ, կարեկցանքն ու կողքինին ձեռք մեկնելը: Ձեր ճանապարհորդությունը ազգային, հայեցիի ծոն էր, որի ելևէջներն արեցին արտերկրի շատ երկրներ. այն հաստատեց, կարգավորեց ու կամոնավորեց օտարի հայեցակետը Հայաստան աշխարհի և բազմադարյան հարուստ պատմության մասին: Անցյալ դժվարություններից



ճանաչած Ձեր հերոսական ոգին, և Դուք ամենուր մեր փողփողող եռագույնին ձուլեցիք հայ ժողովրդի ներողամտությունն ու բարյացակամությունը, մեծահոգությունն ու իղծերը:

Վանածորի հասարակական կյանքում բազում մարդասիրական ձեռնարկումներով հայտնի, մեր համաքաղաքացի պարոն Էդվարդ Խլղաթյանի այս ձեռնարկումը հոգու կանչ է ու վանածորու անկեղծ ցանկություն:

Մենք համոզված ենք, որ «Կիլիկիա»-ն ոչ թե երիտասարդ հանրապետության ազգային նավատորմ ունենալու մասին իղծերի վերջին մոհիկանն է, այլ առիվատյալ ՀՀ ապագա հզորացման ու բարգավաճման:

Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վահան քահանա Ազատյանը իր գոհունակությունը արտա-



հայտեց աստվածահաճո այս նախաձեռնության առթիվ, օրհնեց «Այաս» ծովային հետազոտության ակումբի անդամների, «Կիլիկիա» նավի շինարարների ու անձնակազմի անցած տարիներին կատարած տքնաջան աշխատանքը, մեծ փորձությունների դիմագրավելու նրանց կամքն ու խիզախությունը:

Դե իսկ շքեղ հրավառությունը մի առանձին շուք հաղորդեց շնորհանդեսի ողջ օրվան: Կարծում են Խլղաթյան մարդու նման վերաբերմունքը նաև երիտասարդության դաստիարակության համար կլինի հիանալի միջոց, որովհետև մարդու ամենամեծ ուսուցիչը ճշմարիտ պատմությունն է և այն կերտողների ճշմարիտ գնահատականը:

*Լուու ԽԱՉԱՍՐՅԱՆ
Վանածոր-Կալուգա*

Լուսանկարները՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ

Այնտեղ, որտեղ մեծ փողեր կան, միշտ էլ կգտնվեն մարդիկ, որոնք կփորձեն իրենց համար համեղ պատառ կոկեյ: Առավել ևս, երբ հնարավորություն ունեն տնօրինելու այդ փողերը: Իսկ ամենամեծ գումարները, ինչպես հայտնի է, պատկանում են պետությանը:

Երբ մի անգամ Պետրոս Առաջինին զեկուցում են պետական միջոցների յուրացումների մասին, միայն տեղ Պավել Յագուժինսկուն ցասունով կարգադրում է հրապարակել իր հրովարտակը. «Եթե որևէ մեկը գողանա թեկուզ այնքան, որը կբավականացնի պարան գնելու համար, անմիջապես կախել նրան»: Ի պատասխան Ռուսաստանի զենեղալ-դատախազը

տեսված էին: Բազմաթիվ փորձերին պարզելու, թե ուր չբացան այդ փողերը, նույն պատասխանն էր տրվում. դրանք Հայաստան մուտք էին գործել ոչ պետական ճանապարհներով, ուստի դժվար է ասել, թե ինչ եղան:

1998թ. հուլիսին այդ հարցը տրվեց վարչապետին նրա պաշտոնավարման 100 օրվա առթիվ տեղի ունեցած մամուլի ասուլիսում: Հնչեց նույն պատասխանը, ավելին, մամուլի ասուլիսի տեսագրությունը հեռարձակելիս պետական հեռուստատեսության 1-ին ալիքը կտրել էր զրույցի այդ հատվածը: Մամուլում աղմուկ բարձրացվեց: Աղմուկը, սակայն, շատ արագ մարեց: Փողերն այդպես էլ չգտնվե-

զերում: Ասացեք, խնդրեմ, չլինի՞ որոշել են դպրոցների պատերը ոսկեգծով: 1 մլն ու մի քիչ ավելի դոլարով նոր դպրոց կարելի է կառուցել: Այ՛ թեք թվաբանություն: Այդ նույն 20 միլիոնով կարելի էր մատաղ սերնդին նվիրել ևս տասնյակ նորակառույց դպրոցներ:

Դե իսկ ճանապարհների շինարարության մասին ամեն ինչ պարզ է: Մի թե կարելի է ճանապարհների վերանորոգում անվանել այն կարկատանները, որոնք տեսնում ենք ամեն գարնան: Մեր փողոցը վերանորոգել են այս տարվա մայիսին, կես տարի էլ չի անցել, նորից փոսեր են: Հենց նույն տեղերում: Իսկ ի՞նչ կլինի, եթե ամօրևներ սկսվեն: Ճանապարհների վե-

ԽՆԴԻՐ ԽԵՂԱՑՆՈՐ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ

գարմացած առարկում է. «Ամենաողորմած տեր, չլինի՞ կամենում ես առանց հպատակների մնալ: Ախր չէ՞ որ բոլորն են գողանում, մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ»: Հեռուն չգնանք, ինքներդ հարցրեք ցանկացած մարդու. խելամի՞տ են ծախսվում տարբեր ուղիներով արտերկրից Հայաստան մտնող խոշոր գումարները: Չկասկածեք, տասից ինը բացասական պատասխան կտա: Իսկ տասներորդը կպարզվի, որ պետական պաշտոնյա է, որը կփորձի երկար-բարակ ձեռք ճիշտ հակառակն ապացուցել: Այդ դեպքում կարելի է ընդամենը մի պարզ հակափաստարկ բերել. հասա ի՞նչ միջոցներով է պետական համեստ պաշտոնյան մայրաքաղաքը: Չկասկածեք, շրջաններում շքեղ դրյակներ կառուցում: Չէ՞ որ պապից մնացած ժառանգության կամ արտերկրի հարուստ ազգականների մասին հեքիաթներին այլևս ոչ ոք չի հավատում: Ի դեպ, նոր բան են հորինել՝ շահել է խաղատանը: Այդ պատճառով չէ՞, որ խաղատները սնկի պես աճում են:



ցին: Սակայն դրանով իշխանությանը ամենաթողության ինդուզեցնիա տրվեց: Այսօր, տարիներ անց, այդ պատմությունը այնքան էլ հուզիչ չի թվում, որքան այն ժամանակ: Եղած-չեղածը անհետացած 3-4 մլն դոլար չէ՞ր: Այսօր տասնյակ միլիոն դոլարներ են Հայաստան մուտք գործում, և միշտ չէ, որ հասկանալի է, թե ուր են գնում դրանք և ինչ նպատակով են ծախսվում:

Տե՛ղծերի այն համակարգը, ինչպես այն գործում է մեզանում, Արևմուտքում վաղուց արդեն իրեն սպառել է: Ռուսաստանում էլ արդեն բացահայտ խոսում են դրա արատալիության մասին: «Փողը տանք նրան, ով էժան կանի» սկզբունքը լրացուցիչ և ոչ փոքր ծախսերի է հանգեցնում: Հիշենք թեկուզ Մաշտոցի պողոտայի Լինսի հիմնադրամի միջոցներով կառուցված մայրի սալիկները, որոնք բառացիորեն քարուքանդ եղան հենց հաջորդ օրը: Լինսի հիմնադրամին դեռ կանդիդատներ, իսկ այժմ մեկ այլ բանի մասին:

Մամուլում կարդում են. «Հայաստանում օտարերկրյա միջոցներով կառուցում են 3, 5 մլն դոլար արժողության քամու օգնությամբ աշխատող 2, 6 մլն հզորության էներգահամակարգ»: Այլընտրանքային էներգետիկայի մասին խոսում են արդեն տարիներ շարունակ: Այնուհանդերձ, կա այսպիսի հասկացություն՝ «հզորության սահմանված կիրառություն»: Փորձեք բաժանել մի թիվը մյուսին:

Դա նույնն է, թե հեծանիվ գնես «Մերսեդեսի» արժեքով: Արի ու մի ասա, կիրվատ հո չի, տեղով ոսկի է:

Դառնանք Լինսին: 1998թ.-ից Քըրք Քըրքոյանի Հայաստանին տրամադրվելիք միջոցների բաշխման վերաբերյալ հերթական փուլում ենթադրվում է, որ 40 մլն դոլար կծախսվի ճանապարհատրանսպորտային շինարարության և 20 մլն դպրոցների վերանորոգման համար: Ազնիվ նպատակ է, բայց...

20 մլն դոլարով ենթադրվում է վերանորոգել 18 դպրոց՝ 13-ը Երևանում, 5-ը՝ մար-

րանորոգումը միջոցառումների մի ամբողջ համալիր է, որի մեջ մտնում են և ճանապարհի հիմքի փոխարինումը միջազգային չափանիշներով, և ճանապարհի հարկումը, և, ի վերջո, ճանապարհային երթևեկության մշակմանը և ցուցանակների տեղադրումը: Ամենայն հավանականությամբ, հենց այս ծավալի աշխատանքների հաշվարկով էլ տրամադրվում է փողը:


Իսկ թե ինչպես կարելի է «փող սարքել» ճանապարհաշինությունից, եթե բավարար վերահսկում չկա, ցույց է տալիս մոսկովյան օդակաձև նոր ճանապարհի օրինակը: Ամեն ինչ արվել էր բարձր մակարդակով, իսկ երբ ինչ-որ մեկի մտքով անցավ չափել ճանապարհի լայնությունը, պարզվեց, որ այն նախատեսվածից նեղ է: Ընդամենը 3 սմ-ով: Բայց արի ու տես, որ այդ սանտիմետրերը, բազմապատկած հարյուրավոր կիլոմետրերի, ճարպիկ ճանապարհաշինարարներին աստղաբաշխական գումարներ են բերել:

Իսկ ինչ ենք տեսնում մեր ճանապարհներից: Բնակավայրերի ցուցանակների կամ կառուցների սխեմաների հանդիպած կա՞ք: Միակ բանը, որ տեղը տեղին է գովազդային վահանակներն են, որոնք չպետք է տեղադրվեն խճուղիների առանցքային մասում: Ճանփեզրերի սանտիմետրերը չափող էլ չկա:

Ահա արդեն որերորդ տարին է, Հայաստանը նավթի ու գազի որոնումների համար փող է ստանում: Ըստ էության անհեռանկարային ծրագիր է: Բայց փողը շարունակում են տրամադրել: Ընդ որում՝ միլիոններ: Մի անգամ են հարցրեցի այդ ծրագրում ընդգրկված ոմն գործիչ. «Ինչո՞ւ է իզուր այդքան գումար ծախսվում: Չէ՞ որ այդ գումարը կարելի էր առավել խելամտորեն ծախսել: Թեկուզ հենց այդ նույն հողմաէներգետիկ համակարգի ներդրման նպատակով, որը ավելի շատ օգուտ կտար Հայաստանին»: Ահա թե ինչ պատասխանեց. «Ինչ վատ է որ: Հայաստան փող է մուտք գործում, աշխատատեղեր ենք բացում, մարդիկ աշխատանք են ունենում և աշխատավարձ են ստանում»: Հավանաբար բոլորն էլ, ովքեր գործ ունեն օտարերկրյա ֆինանսական հոսքերի հետ, այսպես են մտածում: Որ իրենք հոգ են տանում ժողովրդի մասին: Իսկ թե ինչ է մտածում ժողովուրդը, ըստ երևույթին, նրանց չի հետաքրքրում: Օրվա հացի փողն ունե՞ս, էլ ի՞նչ ես ուզում: Իսկ վաղը մեկ էլ տեսար օտարերկրյա նոր ներդրումներ լինեն: Փաստորեն մեծ կոմբինատորն «Արևմուտքը մեզ կօգնի» պատվիրանը այսօր էլ հրատապ է:

Պավել ԶԱՆԳԻՐՈՎ

ԿՈՎԿԱՍԻ «ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ». ՄԱԴԱԽԼՈ



Սադախլուն ադրբեջանական մեծ գյուղ է Հայաստան-Վրաստան սահմանին: Հարավային Կովկասի բոլոր երեք հանրապետությունների զանգվածային լրատվամիջոցներում պարբերաբար հիշատակվող Սադախլուն, որը 12 հազարի հասնող բնակչություն ունի, Վրաստանի հարավի ամենաբարձրաժամ գյուղն է: Խորհրդային ժամանակների համեմատ, զգալիորեն աճել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը (4000) զումարած ոչխարների անթիվ-անհամար հոտը: 1148 հեկտար ընդհանուր տարածքից ոռոգվում է տակ 110-ը: Մնացածը չի ոռոգվում. պոմպակայանը չի աշխատում: Մինչդեռ նախկինում Սադախլոյում դեղձենու մեծ այգի կար, Վրաստանի լավագույն պոմիդորներն էին աճեցնում:

Կյանքը լավացել է

Սադախլոյում ապրող ադրբեջանցիները հարևան հայերի հետ միասին զբաղվում են բիզնեսով և հավատում իրար խոսքի, ամեն տարի գինի են քաշում և ազգամիջյան խնդիրների մասին հիշում են միայն այն ժամանակ, երբ վրացի մաքսավորները բռնագրավում են իրենցից մաքսանեց ապրանքը: Բնակչությունը պարտաճանաչ (95-100%) վճարում է Հայաստանից մատակարարվող շուրջօրյա էլեկտրաէներգիայի (մինչև «վարդերի հեղափոխությունը») Սադախլուն գրեթե 8 տարի փաստորեն հոսանքազրկված էր) վարձը: Մարնեուլ-Սադախլո 35կմ-անոց ճանապարհը վերանորոգված է, և այժմ ամբողջ Վրաստանում սրանից բարեկարգ ճանապարհ չկա: Աշխատավարձն ու կենսաթոշակը ժամանակին են վճարվում, իսկ հարկերի և տուրքերի հետ կապված բազմաթիվ խնդիրներն արդեն լուծված են: Եվս մեկ-երկու նմանատիպ հեղափոխություն, և Վրաստանը, թերևս, տարածաշրջանի Շվեյցարիան դառնա: Արտագնա աշխատանքի մեկնողներ գյուղում չկան: Աշխարհում կատարվող իրադարձությունների մասին բնակիչները տեղեկանում են թուրքական և ադրբեջանական հեռուստահաղորդումներից: Եթե տանիքին արբանյակային ալեհավաք կա, ուրեմն այդ տանն ադրբեջանցիներ են ապրում: Սադախլոյում 3 մզկիթ և 6 դպրոց կա:

Շուկան

Եթե թատրոնը սկսում է հանդերձարանից, ապա շուկան սկսվում է վաճառասեղանից: Իզուր չէ, որ գյուղի անունը վրացերենից մոտավորապես կարելի է թարգմանել

նել «վաճառասեղանային» («դախլի» վրացերեն նշանակում է «վաճառասեղան»): Շուկայի գլխավոր օրը երեքշաբթին է: 2000-ի հասնող վաճառակետերը երեքշաբթի կրկնապատկվում և եռապատկվում են: Գոյության վերջին 13 տարիների ընթացքում Սադախլոյի շուկան տասնյակ փոփոխությունների է ենթարկվել: Ամբողջ չորս տարի՝ 1991-95թթ., այն անլեգալ էր գործում: Այն ժամանակվա նահանգապետ Լևան Սամալաձեն շատ շուտ հասկացավ, որ շուկան փակելն անհնար է: Եվ հետո ինչն է մորթես «ածան հավին» և քեզ ու ուրիշներին էլ հետո գրկես կերատաշտից օգտվելու հնարավորությունից: 1995թ. Շևարդնաձեի հրամանագրով ստեղծվեց սահմանամերձ հատուկ առևտրական գոտի: Այսինքն արդեն գործող շուկային օրինական կարգավիճակ շնորհվեց:

Շահութաբեր բիզնես

Ղարաբաղյան հակամարտության տարիներին Հայաստանը Վրաստանին կապող գյուղամերձ կամուրջը, անախորժ միջադեպերից խուսափելու նկատառումով, վրացական կողմի նախաձեռնությամբ փակվեց: Որոշ ժամանակ անց այն բացեցին, հետո նորից փակեցին, ինչ-ինչ ուժերի թելադրանքով կամուրջը պայթեցրեցին: Հայերն ու ադրբեջանցիք հո չէին կարող կռվի թե՛ պահին միասին առևտուր անել: Հայերն այդ ժամանակ ընդգծում էին, որ Սադախլոյի բնակիչներն իրենց համար պարզապես ադրբեջանցի չեն, այլ, առաջին հերթին, Վրաստանի քաղաքացիներ են: Ասենք հիմա այդ մասին արդեն ոչ ոք չի էլ հիշում: Կարևոր չէ, թե ով է մթիլիսիի՞ց ես, Բաքվի՞ց, Երևանի՞ց, թե՛ Սադախլոյից. առևտրի վրա դա չի անդրադառնում:

Մամուլում հաճախ այն կարծիքն է հրնչում, թե Սադախլուն գործազուրկ մարդկանց ծայրը ծայրին հասցնելու հնարավորություն է տալիս: Բայց դա թյուր կարծիք է, քանի որ մարդիկ Սադախլո են գնում առևտուր անելու, արդյունքում իրենց հարեճակիցներից զգալիորեն շատ գումար են վաստակում:

Առևտուրը Սադախլոյում իրականացվում է հիմնականում հայկական դրամով, և միայն թուրքիայից ներկրված հագուստն են նախընտրում վաճառել դոլարով: Եվ դա այն դեպքում, երբ վիթխարի վահանակի վրա գրված է, որ լարիից բացի այլ արտարժույթով առևտուր անելն արգելված է: Ընդ որում, խախտողներին, ըստ նույն գրության, սպառնում է տուգանք: Եթե, այնուհանդերձ, Սադախլոյի իշխանությունները հետևողականություն ցուցաբերեն, ստիպված կլինեն տուգանել բոլորին անխտիր:

Մաքսանենգություն

Ու թեև, ասացինք, շուկան սկսում է վաճառասեղանից, Սադախլոյի շուկան սկիզբ է առել մաքսանեց ապրանքներից: Մինչև վերջին տարիները ապրանքի 90%-ը Սադախլոյում հայտնվում էր մաքսանեց ճանապարհով, իսկ ճանապարհներին սպանություններն ու կողոպուտը դարձել էին սովորական երևույթ, այնքան սովորական, որ մամուլը դրանց մասին դադարեց հաղորդել: Իրավիճակը, սակայն, աստիճանաբար փոխվեց, հատկապես նոր իշխանությունների օրոք: Բայց ասել, թե Սադախլոյում կատարյալ խաղաղություն ու անդորր է տիրում, այնքան էլ ճիշտ չէ: Շուկան, այնուամենայնիվ, շուկա է մնում, և միջադեպերն ամիսուսափելի են: Դրանք հիմնականում հարբեցողության, մաքսանենգության, գողության և կաշառակերության արդյունք են: Այս տարի մաքսավորները նույնիսկ փակեցին Հայաստանից Սադախլո տանող մի քանի երկրորդական ճանապարհներ, որպեսզի մաքսանեցներին թույլ չտան շրջանցել թբիլիսի-Երևան մայրուղու վրա գտնվող մաքսային ծառայության հսկիչ կետը: Դա, անշուշտ, նվազեցրեց մաքսանենգության մակարդակը, բայց արմատախիլ չարեց: Անարդարությունները հատկապես կատարվում են Կարմիր կամրջի մաքսային կետի մոտ: Գործում է հետևյալ մեխանիզմը. ենթադրենք թրեյլերի վարորդը պետք է ուղեբեռի համար 1000 լարի վճարի: Նրան առաջարկում են 1000-ի փոխարեն վճարել 300 լարի: Բնականաբար, վարորդը համաձայնում է, բայց մի քանի կիլոմետր տեղաշարժվելուց հետո նրան կանգնեցնում են... մաքսանեց ապրանք փոխադրելու մեղադրանքով: Արդյունքում մարդը վճարում է կաշառքը և տուգանքը՝ գումարած մաքսային տուրքի իրական արժեքը:

Մինչ հայերն ու ադրբեջանցիք զբաղվում են առևտրով, վրացիք նախընտրում են նրանցից կաշառք կորզել, մանավանդ որ զբաղեցնում են համապատասխան ստուգող վերահսկող և ղեկավար պաշտոնները: Սադախլոյի շուկայի առևտրականների վրացիների, հայերի ու ադրբեջանցիների հետ գրույցները հաստատեցին այն իրողությունը, որ առևտրով զբաղվող և իրենց առօրյա հոգսերով ապրող հասարակ մարդիկ հեռու են քաղաքականությունից: Նրանց միակ ցանկությունը խաղաղ ապրելն է:

ՌՈՒՄ ԵՎ ՀԱՅ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Նոր ժամանակների հրամայականը

Ականատեսները վկայում են, որ երբ Սուրբ Փրկիչ Քրիստոսի եկեղեցու օծման արարողության ժամանակ Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն պատվո տեղ հատկացրեց Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսին, ուղղափառ եկեղեցու որոշ ներկայացուցիչներ դժգոհեցին: Սրանց դժգոհությունը կարելի է բացատրել մի պատճառաբանությամբ՝ այդ ինչպես է, որ ռուս օրթոդոքս եկեղեցու քահանայապետը այդպիսի պատվի է արժանացնում քրիստոնեական մեկ այլ եկեղեցու ընտանիքի անդամի, ինչպիսին Հայ առաքելական եկեղեցին է: Չէ՞ որ ռուս (այս պարագայում՝ հույն ուղղափառ) և հայ եկեղեցիները, բացի եկեղեցական տարբեր ընտանիքների պատկանելուց, 451 թվի Քաղկեդոնի ժողովի պատճառով հերձված ու հերետիկոս են անվանել միմյանց: Ավելին՝ նրանց բաժանում է ծիսական արարողակարգի մի այնպիսի անջրպետ, ինչպիսին նգովքն է: Սակայն դժգոհությունը մի պահ է կաշկանդել հանդիսավոր արարողության մասնակիցներին: Ամենայն հավանականությամբ նրանք հիշել են բոլոր ժամանակների համար հրատակ եկեղեցական կարգախոսը՝ «Միություն ի կարևորս, ազատություն յերկբայականս և սեր ամենայնի»:

Այնուամենայնիվ, ռուս և հայ եկեղեցիներն ունեն մի շարք տարբերություններ, որոնց մասին խոսում է Երևանի Սուրբ Տիրամոր հովանու տաճարի քահանա հ. Արսենի Գրիգորյանը: «Այսօր դժվար է տարանջատել հայ քրիստոնյա հասկացությունը, քանի որ հայերը հիմնականում հավատացյալ են և մեծ մասամբ Առաքելական կամ Գրիգորյան եկեղեցու հետևորդներ են: Իսկ դա նշանակում է, որ մեր եկեղեցին ոչ թե «ռուսական» որակավորում ունի, այլ «ուղղափառ», որ բազմազգ եկեղեցական միավոր է: Բացի այդ, ռուս եկեղեցին ոչ կրթական, ոչ ազգային, այլ միայն հոգևոր կենտրոն է, ուր մարդիկ գալիս են միայն աղոթելու: Մինչդեռ Հայ առաքելական եկեղեցին՝ հոգևոր, և՛ ազգային, և՛ մշակութային կենտրոն է», ասում է հայր Արսենիը:

Բացի այս տարբերակումից, գոյություն ունեն ժողովրդական մի շարք ծիսական տարածայնություններ, որոնցից ամենացավոր մատաղի արարողությունն է: Հայն իր ուրախությունն առանց մատաղի չի պատկերացնում, իսկ ռուսը դա համարում է հեթանոսություն, բարբարոսություն և ոճիր: Հավանաբար մասնատիպ տարածայնություններից ու որակումներից է ծնվել կրոնական այն մոլեռանդությունը, որը դարձրեց շարունակ պաղ ու անհամբուրժող է պահել երկու հնագույն եկեղեցիների հավատացյալներին միմյանց նկատմամբ:



«Սակայն եկել են նոր ժամանակներ», ասում են առաջադեմ և քրիստոնեական երկխոսության ջատագով, առողջ աստվածաբանական մտածողության տեր հոգևորականները, ովքեր կարծում են, որ դավանաբանական տարածայնությունները հիմնականում սխալ փոխհասկացության և եզրերի ոչ ճիշտ մեկնաբանության հետևանք են: Դրանք պետք է լուծում ստանան ոչ միայն եղբայրական համագործակցության, այլև եկեղեցական բարձրագույն ժողովների ժամանակ վավերացվելիք հաշտության փաստաթղթերի տեսքով: Մեր այն հարցին, թե ինչու՞ մինչ այժմ եկեղեցիները չեն լուծել այդ հարցերը, պատասխանեց Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Եզնիկ եպս. Պետրոսյանը: Նա ասում է, որ նման հարցերը շատ արագ չեն կարող լուծվել զուտ այն պատճառով, որ պետք է ուղղափառ 14 և արևելյան 5 եկեղեցիներ մեկ առ մեկ զումարեն իրենց եկեղեցիների բարձրագույն մարմինների հավանքներ, քննարկեն և վավերացնեն որոշումներ, որ չկան լուրջ և մտահոգիչ աստվածաբանական, դավանաբանական տարածայնություններ երկու եկեղեցական ընտանիքներին պատկանող այս կամ այն եկեղեցիների միջև: Այնուհետև պետք է զումարեի եկեղեցական մեծ համաժողով, որի հայտարարությունից հետո կարելի է փաստացի վավերացված համարել նգովքի վերացումը, ջերմ հարաբերությունների իրավականությունը և դավանաբանական անվտանգությունը: Անշուշտ, վաղուց ընթացքի մեջ գտնվող այս գործողությունը դեռ տարիներ է պահանջում: Միաժամանակ Սրբազան հայրը պատմում է, որ այս հարցի լուծմանն իրենց անուրանալի նպաստ են բերել Երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա կաթողիկոսները:

Լուսահոգի հայրապետների գործն այսօր շարունակում է Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը, որի անձնական ջերմ հարաբերությունները Ալեքսի Բ պատրիարքի հետ կարևոր դեր են խաղում ռուս և հայ եկեղեցիների բարիդրացիական հարաբերությունների զարգացման և համագործակցության կայացման գործում:

Վերլուծելով երկու եկեղեցիների փոխհարաբերությունները, Եզնիկ սրբազանը «Ազգի» խնդրանքով մի պատմական էքսկուրս կատարեց, որից պարզ դարձավ, թե ինչքան լայնախոհ էր Վազգեն Ա կաթողիկոսը, որ շուրջ 30 տարի (1964-1993 թթ.) երկխոսություն վարեց ռուս եկեղեցու գահակալի հետ, որի արդյունքում ծնվեցին բազմաթիվ համաձայնագրեր, խաղաղության կոչեր և հայտարարություններ: Բարիդրացիական հարաբերությունների ապացույց է նաև այն, որ և՛ լուսահոգի Գարեգին Ա և՛ ներկայիս կաթողիկոս Գարեգին Բ հայրապետներն իրենց պաշտոնական առաջին այցերը կատարեցին դեպի ռուսաց պատրիարքություն: Որպես պատասխան Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն անձամբ գլխավորեց Հայաստանի քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի տոնական արարողություններին մասնակցող ռուսական պատվիրակությունը: Այն դեպքում, երբ հրավիրված 130 պատվիրակություններից միայն 5-ն էին գլխավորում քահանայապետները:

Մեր օրերում ռուս և հայ եկեղեցական հարաբերությունները թևակոխել են ավելի ուշագրավ մի փուլ, որ կարճ ձևակերպվում է այսպես՝ միջեկեղեցական համագործակցություն սոցիալական ոլորտում և աջակցություն քաղաքական հարցերում: Վերջինիս հաճախ տրվում է միջպետական նշանակություն: Խոսքը Մոսկվայի և համայն Ռուսիո Ալեքսի Բ պատրիարքի նախաձեռնությամբ դարաբաղյան խնդրի կարգավորմանը միտված հանդիպումներն են Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և Կովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ, Շեյխ Հաջի Ալլահ Շյուքուր Փաշազադեի միջև: Ի դեպ, նման հանդիպումներ եղել են նաև Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում: Արդեն կայացած երեք հանդիպումները տվել են իրենց բարի պատուհները գերիների փոխանակման տեսքով: Պետք է նշել, որ հայ և աղբյուրացի հոգևոր պետերի հանդիպումները դարձել են նաև քառակողմ, քանի որ ռուս, հայ և աղբյուրացի հոգևոր առաջնորդներից բացի, վերջին հանդիպմանը (2004 թ.) մասնակցել է նաև վրաց պատրիարք Իլյա Բ-ն: Երկու է, վերջին հանդիպումը, նախատեսված ընթացիկ տարում, հետաձգվել է ինչ-ինչ պատճառներով, սակայն առաջիկա տարում կկայանա, հավատացնում է Եզնիկ սրբազանը: Թե որքան կարող են այս հանդիպումները նպաստել քաղաքական և միջպետական լարվածության թուլացմանը, թողնում ենք ընթերցողի երևակայությանը:

Մայր աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Սրբազան հայրը մատնանշեց նաև ռուս և հայ եկեղեցական հանձնաժողովի (ստեղծված 2001 թ.) աշխատանքները: Դրանք միտված են լուծելու եկեղեցիների հավատացյալների սոցիալական դաշտի խնդիրները (սոցիալ-տնտեսական, կրթական և զինձառայության ոլորտներ), ինչպես նաև լուծումներ գտնելու բիոթիկայի հարցերի

շուրջը, ինչպիսիք են մարդու կլոնավորումը, արորտի, դիակիզման և այլ քրիստոնեական էթիկայի հարցեր:

Այսուհանդերձ, ակնկիայտ է, որ ռուս և հայ եկեղեցիները և, ինչու չէ, նաև մյուսներն ունեն նմանատիպ բազմաթիվ մարտահրավերներ: Ժողովրդական լեզվով ասած՝ «նրանք մի տնից չեն, բայց մի հալից են»: Եվ որքան մտահոգիչ են դժվար

րությունները, այնքան հուսադրող, որ հայ և ռուս եկեղեցիները դրանք կհաղթահարեն զաղափարական և գործնական միասնությամբ: Սա է ժամանակի և նոր հասարակության հրամայականը:


Սուսաննա ՄԱՐԳԱՐՅԱՆ

7. Գ. Մինչ այդ երևանի Տիրամոր հովանու տաճարում (կառուցված 1917 թ., ռուսական կայսրության համար) տոնական տրամադրություն է: Հայր Արսենիյը մկրտում է փոքրիկ Անաստասիային, որ ուրախությամբ թափկները ձգում է դեպի քահանա հայրը՝ կարծես գիտակցելով, որ մկրտվում է, այսինքն՝ կատարում է քրիստոնյայի ամենամկիրական և կարևոր քայլը՝ հոգու փրկության, հավերժանալու ճանապարհին...


Օծվեց Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ Մայր եկեղեցին

Հոկտեմբերի 23-ին տեղի ունեցավ Վանաձորի նորակառույց Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ Մայր եկեղեցու օծ-

վակեցին շինարարության աշխատանքները: Եկեղեցու ճարտարապետն է Ռուբեն Ազատյանը: Շինարարությունն իրականացրել է «Արգիշտի-1» ՍՊԸ-ն:



ման արարողությունը: Արարողությունը նախագահեց և Սուրբ պատարագ մատուցեց Նորին Սուրբ Օծություն տեր Գարեգին



Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Կաթողիկոսի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաջնորդների ու միաբանների, գերաշնորհ հոգևոր հայրերի, հոգևոր դասի ներկայացուցիչների հետ Վանաձոր էին ժամանել տեր և տիկին Սարգիս և Ռուբ Բեդկյանները, ում բարերարությամբ է կառուցվել եկեղեցին, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Էվանսը, սփյուռքահայ համայնքի ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ: Ներկա էին բազմաթիվ ուխտավորներ, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, մարզպետարանի, քաղաքապետարանի աշխատակիցներ, մտավորականներ, մանկավարժներ, ուսանողներ, աշակերտներ՝ հազարավոր վանաձորցիներ: 2002թ. մայիսի 24-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց եկեղեցու հողօրհնների արարողությունը: 2003-ից

մացրել է «Արգիշտի-1» ՍՊԸ-ն: 2003-ի հունիսի 23-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց եկեղեցու հիմնօրհնների արարողությունը: Կենտրոնագմբեթ եկեղեցին ունի 300 քառ. մետր դահլիճ և զանգակատուն, ավանդատներ, վերնատուն: Եկեղեցու ընդհանուր մակերեսը 487 քառ. մետր է, բարձրությունը՝ 33,3 մետր: Գարեգին Բ կաթողիկոսը Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցուն նվիրաբերել էր հինգ մեծադիր սրբապատկեր, ինչպես նաև սրբազան անոթներ: Եկեղեցուն երկու սրբապատկեր էր նվիրել տեր Վահան քահանա Ազարյանը և մեկ սրբապատկեր՝ Գագիկ Քալանթարյանը: Իսկ «ԱՄՍ»-ի տնօրեն Տիգրան Կարապետյանը նվիրաբերել էր արծաթյա խաչ: Վեհափառ Հայրապետի ձեռամբ, Սուրբ խաչով, Սուրբ Ավետարանով և սրբալույս մյուռոնով օծվեց Սուրբ Սեղանն իր հիմքով և աջ ու ահյակ կողմերով: Արարատյան թեմի առաջնորդ Նավա-



սարդ եպիսկոպոս Կճոյանն օրհնեց խորհրդարանը, իսկ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանն օրհնեց մկրտության ավագանը: Օծման և Սուրբ պատարագի արարողություններին իրենց կատարումներով համդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու միացյալ երգչախմբերը: «Հիշարժան է այս օրը, - դիմելով հավատավոր ժողովրդին ասաց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: - Գուգարաց աշխարհի պատմության էջում արձանագրվում է Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու սրբավայրերի դատում և մեկ սրբազան աղոթատեղի է ի կյանք կոչվում: Քարակերտ այս շինությունն այս պահից Վեհափառ Հայրապետի օծյալ աջով վերածվեց Աստծո տան»: Ամենայն Հայոց կաթողիկոսն, օրհնելով ներկաներին, ասաց. «Վանաձոր քաղաքում կառուցվեց ձեզ և քաղաքին արժանի մի նոր եկեղեցի, որ օրհնության և օծման սրբազան արարողությամբ անվանակոչեցինք մեր մեծ սրբի՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու անունով: Հայոց ազատ ու անկախ հողի վրա հառնում են եկեղեցիներ, որպեսզի մեր ժողովրդի աղոթքով և մեր եկեղեցյաց օրհնությամբ զորանա ու առաջընթաց ապրի ազատ մեր կյանքը: Չորս տարի առաջ Ամերիկայում ապրող մեր բարերար զավակների հետ կայացվեց որոշում, որ Վանաձորում կառուցվի եկեղեցի՝ ի սպասավորություն մեր բարեպաշտ հավատավոր զավակների: Չեռնամուխ եղանք այդ նվիրական գործին՝ աղոթքով և հաստատուն հավատով: Այսօր մեր հոգին ուրախությամբ է համակված. եկեղեցու օծման սրբազան արարողությանն իր մասնակցությունն է բերում սիրելի բարերարը՝ իր ազնիվ տիկնոջ հետ: Մեծագործ բարերարների առատածեռն նվիրաբերումով՝ այս եկեղեցու կողքին պիտի գործի նաև Հայորդեաց տունը: Բարերարների նվիրաբերությամբ ծրագրվում է նաև իրականացնելու բարեգործական ձեռնարկներ՝ բարեգոր-

ծական ճաշարան և համաբուժարան կառուցելու: Որքան խորհրդանշական է մեկտեղումը հայրենաբնակ և սփյուռքի մեր զավակների՝ նվիրական այս հարկի ներքո: Որքան մխիթարական է, որ սփյուռքի մեր զավակներն իրենց ազնիվ աշխատանքի վաստակը բերում են շաղախելու հայրենյաց մեր կյանքին: Լոռու մարզային և տեղական իշխանությունները մշտապես աջակցություն են ցուցաբերում մեզ, թեմի առաջնորդին և հոգևոր մյուս սպասավորներին: Վստահ ենք՝ բոլոր ձեռնարկները, որ իրականություն են դառնալու, առավել ևս պիտի զորացնեն այդ համագործակցության ոգին, որպեսզի պետություն և եկեղեցի դարավոր մեր ընթացքը շարունակի բարի արդյունավորում ունենալ՝ ի սեր մեր ժողովրդի և մեր հայրենիքի շինության»: Ամենայն Հայոց կաթողիկոսը բարձր գնահատանքի արժանացրեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի գործունեությունը: «Գուգարաց թեմի բարեջան առաջնորդը և հոգևոր սպասավոր հայրերը դժվարին պայմաններում են իրականացնում իրենց ծառայությունը: Որովհետև առավել չափով այս տարածաշրջանում գայլի ոհմակների պես հարձակվել են մեր հավատավոր հոտի վրա կրոնական տարբեր կազմակերպություններ ու աղանդներ: Եվ ես վստահ եմ, որ ձեր նախանձախնդիր ոգին պատմե՜ջ պիտի դնի նրանց առջև, սիրելի բարեպաշտ հավատացյալներ», - ասաց նա: Կաթողիկոսն իր գնահատանքի խոսքն ուղղեց նաև եկեղեցու ճարտարապետին և շինարարներին՝ օրհնելով նրանց: Այդ օրը լրանում էր Սարգիս և Ռուբ Բեդկյանների ամուսնության 40 տարին, և Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց նրանց: Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվեց Սուրբ մատաղ: Եկեղեցին կգործի եկող տարվա հունվարից, պատարագից քահանան կլինի տեր Վահան Ազարյանը:

Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հանրակրթական դպրոցների Հայոց եկեղեցու պատմություն ու հայագիտական մյուս առարկաների ուսուցիչների համար իբրև լրացուցիչ գրականություն կարող է ծառայել վերջերս լույս ընծայված «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր» գիրքը՝ հաստատված կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի կողմից: Գրքի առաջաբանում Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպ. Չուլջյանը, ում մտախղացմամբ էլ լույս է տեսել գիրքը, համոզմունք է հայտնում, որ «պետական, ազգային, եկե-



ղեցական ու ժողովրդական տոներն ունեն հոգևոր չափազանց մեծ նշանակություն. անձի հոգում ու մտքում կուտակվում

են անգերազանցելի հոգեմտավոր ուժ, նախանձախնդրություն...»: Գայանե Անտոնյանի աշխատասիրությամբ կազմված գիրքը Հայ եկեղեցու տոների մասին առաջին հրատարակությունը չէ, սակայն հետաքրքիր է նրանով, որ այստեղ եկեղեցական տոները ներկայացված են պետական տոներից անբաժան: Այսպես շեշտվում է նաև եկեղեցական ու ազգային տոների կարևոր դերը նոր սերնդի գաղափարական ընկալումների ձևավորման ու հայեցի դաստիարակության գործում: Գրքի առաջին մասում ներկայացված են ընդհանուր գիտելիքներ ՀՀ և Հայ եկեղեցու տոների մասին: Երկրորդ մասում շարա-

Նոր խոսք՝ թունանյանագիտական ասպարեզում

Գառնիկ Շախկյան. «Հովհաննես Թունանյան. Հայրենագիտական համանվագներ»

Թունանյանագիտության ճանապարհին որոնումները գիտնականների կողմից շարունակվում են: Այս ասպարեզում իր յուրօրինակ մոտեցումը, իր ջանքերի, պրպտումների արգասիքն ընթերցողին հանձնեց ճարտարապետական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանը՝ ըստ արժանվույն հարգելով մեծ լուռեցու անհատակ իմաստունության վերաբերյալ արդեն իրենց խոսքն ասած նախորդներին (Ա. Ինճիկյան, Ան. Սահիճյան, Ե. Ալեքսանյան, Մ. Սանթրյան, Ռ. Թունանյան և ուրիշներ): Գ. Շախկյանի «Հովհաննես Թունանյան. Հայրենագիտական համանվագներ» գիրքը լույս է ընծայել «Տիգրան Մեծ» հրատարակչությունը: Հեղինակը գիրքը նվիրել է Հովհաննես Թունանյանի կյանքի և գործի նվիրյալներ, թունանյանական տոհմի մեր ժամանակի արժանավոր դուստրեր՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արմենուհի Թունանյանի և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզան Թունանյանի մշտավառ հիշատակին: Գրքի նախաբանում Անահիտ Սահիճյանը գրում է. «Հեղինակը միանգամայն հավաստում է, որ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, գրականագետ, զրաբանադատ Թունանյանի անվան կողքին հավասարի և համարժեքի իրավունքով կարող ենք դնել նաև հայրենագետը: Իրոք որ, այն ամենին, ինչին հասել է նրա ձեռքը, կրում է հանճարի կնիք... Շնորհակալ լինենք ճարտարագետ Շախկյանին իր այս մեղվաջան աշխատանքի համար, որով փաստարկված և հարուստ վավերական նյութով ներկայացնում է Թունանյանի գործունեության հանիրավի ուշադրության չառնված մի կարևոր կողմը՝ հայրենագիտական ներդրումը»: Շփվող ու մարդասեր լուռեցու բազմահազար կապերն արտացոլող, նաև՝ ընտանեկան մեծ թվով լուսանկարներ հնարավորություն են տալիս ընթերցողին՝ հաղորդակից լինելու նրա՝ իմաստունությամբ հագեցած կյանքի դրվագներին: Լուսանկարներից շատերն առաջին անգամ են տպագրվել: Դստյան բնապատկերներն ու Լոռվա բնաշխարհի բացառիկ հմայքը հաղորդող լուսանկարներն ի ցույց են բերում այն միջավայրը, որ մտքի թռիչք է տվել հանճարին: Հեղինակի հիացմունքի ու հանճարի հանդեպ զգացած ոգևորության արտահայտությունն է «Ա՛խ, ինչ սքանչելի խոսք է. եղիցի լ՛ույս...» վերտառությամբ ներածական խոսքի ամփոփիչ պարբերությունը. «Տեսե՛լ եք գարնան հորդառատ անձրևից առաջ կայծակի հզոր շայշունը, ամպրոպի ասեղագոչ որոտը, անձրևից հետո

լազուր երկինքը գոտևորող ծիածանի գունեղ բոցավառումը... Այդպես բուռն ու հախուռն եղավ Թունանյանի հրաշքը հայոց Պառնասի և «մըթնած» իրականության երկնականարում՝ ջինջ ու զուլալ հետք թողնելով հայոց բազմադարյան մշակույթի անդաստանում, հույս ու պայծառություն ներարկելով նիրհի և ընդդարմության մեջ գտնվող ժողովրդին՝ սերունդներին առնելով իր լուսավոր ժրի մեջ»: Ըստ էության, ներածականն անդրադարձ է թունանյանական աշխարհը պեղած նախորդների խոհերին, ինչը հեղինակը համադրել է սեփական մտորումներին, վերլուծություններին: Ներածականին հաջորդում է Ա մասը («Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վըրա... կամ բնաշխարհի հմայքով արբեցած»), ուր հեղինակն իրավամբ հավաստում է, որ Թունանյանի ազատատենչ ու կենսաթրթռ ոգին իր բնակավայրից ու բնությունից է քաղել կենսահույսը: Հիացմունքի մի ալիք է ծավալում հեղինակը՝ Լոռու ձորի շոշափելի, տեսանելի թունանյանական նկարագրությունների առնչությամբ: Գրքի Բ մասում («Մամիկոնյանների բարձրաբաշ նվիրական տաճարը, գեղաքանդակ հրաշքը և մյուսները») հեղինակը նշում է, որ Թունանյանը շատ էր կարևորում մշակույթի, ճարտարապետության հուշարձանների դաստիարակիչ, ներգործուն դերը: Այս ոգեղեն գանձերը հեղինակի կողմից մասնագիտական մանրագնին քննության են առնված գրքի վերոնշյալ հատվածում: Գրքի Գ մասը (Թունանյանը և «Հայոց ճարտարապետության հիշատակարանների լեզվի առաջին ուսուցիչը») Թորոս Թորամանյանի գործունեության ծավալման և արգասաբերության համար Հովհ. Թունանյանի բարոյական և նյութական աջակցությանն է վերաբերում: Գիրքն ունի նաև հայրենագիտական ծաղկաքաղ՝ Թունանյանի ստեղծագործություններից: Գրքի համար մեծ արժեք է հանդիսանում Գ. Շախկյանի կազմած տոհմածառը, որը ներառում է Հովհ. Թունանյանի պապի՝ Հովհաննես աղայի երեք զավակների՝ Թադևոսի, Մեհրաբի և Գրիշկայի տոհմաշյուղերը: Այն շատ երկարատև և աշխատատար գործընթաց է ենթադրում: Անտարակույս, գիրքը կհետաքրքրի ընթերցողների լայն շրջանակի, քանզի Թունանյանն անեզր հանրագիտարան ու անշփոթ ուղեցույց է մեզ՝ հայերիս համար: Գրքին մաղթում ենք ջերմ ընդունելություն, իսկ հեղինակին՝ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Արիա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

դրված են տեղեկություններ եկեղեցական ու պետականորեն ընդունված տոների, դրանց ծագման ու խորհրդի մասին՝ անփոփոխ եզրահանգումներով: Փոքրիկ շփոթություն կարող է առաջացնել, թերևս, գրքի վերջում գետեղված ցանկը, ուր պետական և եկեղեցական տոները ներկայացված են օրացուցային հերթականությամբ՝ ըստ ամիսների: Մինչդեռ, եկեղեցական տոներից շատերը, լինելով շարժական (այս մասին նշում է նաև գրքի հեղինակը), միշտ չէ, որ կարող են հանդիպել նշված ամիսին: Սրանով, իհարկե, չի ստվերվում գրքի նշանակությունը: Գիրքը լույս է տեսել Ամերիկայի Արևելյան թեմի «Զգոն եպիսկոպոս Տեր Հակոբյան» հիմնադրամի մեկենասությամբ:

ԱՄԱՇՏՈՑԸ
Առաջին անգամ հայերեն լույս է տեսել 20-րդ դարի ռուս եկեղեցական գործիչ,

աստվածաբան Ալեքսանդր Շմեմանի «Մեծ պահք» աշխատությունը, ուր ներկայացված է բյուզանդական ուղղափառ եկեղեցիների Մեծ պահքի շրջանը: Չնայած Հայ եկեղեցու հետ բյուզանդական ուղղափառ եկեղեցիների ծիսական տարբերություններին, ռուս հոգևորականի այս գիրքը պատասխան կարող է տալ նաև հայ ընթերցողների հարցերին՝ ո՞րն է Մեծ պահքի խորհուրդը, ինչո՞ւ է այն մեզ պետք, ինչպե՞ս պետք է այն ընթանա: Թարգմանության պատրաստումը և հրատարակությունը կատարվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան Տ. Դուկաս արեղա Ջաքարյանի նախաձեռնությամբ: Թարգմանության որոշ հատվածներ կարելի է ընթերցել նաև նույն Հայր Սուրբի նախաձեռնությամբ ստեղծված www.lusamut.net ինտերնետային հասցեում:

«ՄԱՇՏՈՑԸ» ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ

Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի հոբելյանական տարվա առիթով օրերս Օշականի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդարանում նշվեց «Մաշտոց» կրթամշակութային, գիտական կենտրոնի հասարակական կազմակերպության ստեղծման 10-ամյակը: Կենտրոնը հիմնադրվել է Վանաձորում՝ իր շուրջ համախմբելով Լոռու մարզի մտավորականներին: 1997թ. այն ստեղծեց «Մաշտոց» համդեսը, ուր գետեղվում են հայտնի մտավորականների և գրական գործիչների ստեղծագործությունները:

ԻՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԳԻՐԸ»



Մեսրոպ Մաշտոցի և հայոց գրերի ստեղծման մասին տեղեկությունները մեզ են հասել Կորյունի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և այլոց գրավոր վկայություններից: Հայոց գրերի ստեղծման պատմությունը անսպառ նյութ է մատուցել ինչպես հայագի՝ հայր Միքայել Չամչյանի, հայր Ղուկաս Ինժիճյանի, ուսուցչապետ Սկրտիչ Եմինի, Քերովբե Պատկանյանի և այլոց, այնպես էլ օտար հեղինակների՝ հայագետներ Պետերմանի, Յուրչեմանի, Վահլի, Ֆրիդրիխ Կոպպի, Լանգլուայի և ուրիշների գիտական հետազոտությունների և գրական մեկնաբանությունների համար, որոնք թողել են գիտական և պատմական մեծարժեք ուսումնասիրություններ: Կերը նշված հեղինակների աշխատանքները, սակայն, շարադրված են եղել կամ գրաբարով, կամ օտար լեզվով, այսինքն՝ մատչելի չէին հայոց գրերի պատմությամբ հետաքրքրվող հայ ընթերցողների լայն շրջանակին:

Այս իմաստով ուշագրավ է Թիֆլիսում 1892թ. լույս տեսած «Հայոց գիրը» արևելահայերենով գրված պատմաբանական աշխատությունը, որի հեղինակն էր երիտասարդ ուսուցիչ և փիլիսոփա, իսկ հետագայում անվանի մանկավարժ և հասարակական գործիչ Իսահակ Հարությունյանը: Գիրքը մեծ ընդունելություն է գտնում մտավորականների և ընթերցողների շրջանում:

Հայոց գրերի ստեղծման ուսումնասիրությունը Ի. Հարությունյանը սկսել էր դեռևս Գերմանիայում ուսանելու տարիներին: 1885 թվականին նա իր երկասիրության առաջին արդյունքները ներկայացնում է «Լայպցիգի հայ ակադեմիական ընկերության» քննարկմանը, որի հիմնադիր անդամներից էր: Այն արժանանում է

խրախուսանքի, և Հարությունյանին առաջարկվում է շարունակել աշխատանքն այդ ուղղությամբ: Ուսմանը զուգընթաց Ի. Հարությունյանը շուրջ երկու տարի ուսումնասիրում է հայ գրերի ստեղծման, ինչպես նաև լեզվի և խոսքի ծագման մասին հայերեն և օտարալեզու աղբյուրները. արդյունքում ծնվում է «Հայոց գիրը» աշխատությունը: 1887 թվականին այն ներկայացվում է Յուրչեմի Իզմիրյան կտակով գործող «Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխությանը» (Կ.Պոլիս): 1888-ին աշխատությունն արժանանում է «Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության» բոլոր մրցանակներին:

Նույն տարում ավարտելով ուսումնառությունը Գերմանիայում՝ Ի. Հարությունյանը վերադառնում է Թիֆլիս, որտեղ երկար տարիներ զբաղվում է մանկավարժական և գրական գործունեությամբ, ակտիվորեն մասնակցում հասարակական կյանքին: Դասավանդում է հոգեբանություն, տրամաբանություն, հայոց լեզու և գերմաներեն Ներսիսյան, Յովնանյան և Գայանյան կրթօջախներում: Ի. Հարությունյանը հեղինակ է ավելի քան մեկուկես տասնյակ ինքնուրույն, մի այդքան էլ թարգմանական գրքերի, ինչպես նաև մանկավարժության, հոգեբանության, տրամաբանության, հրականության և ժամանակի հրատարակարգերի մասին բազմաթիվ հոդվածների:

«Հայոց գիրը» գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ այն թեև գրված է ժամանակակից գիտական մեթոդով, սակայն զուտ գիտական հետազոտություն չէ միայն և նախատեսված է նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

Հայոց լեզվի ծագման հարցի վերաբերյալ բերելով մի շարք փաստարկներ հեղինակը համոզում է եզրակացության, որ այն պատկանում է հնդեվրոպական ընտանիքին և պարսկական, քրդական և Առաջավոր Ասիայի մի քանի լեզուների հետ կազմում է մի առանձին խումբ:

Ինչ վերաբերում է հայոց գրերի ծագմանը, Ի. Հարությունյանը նշում է, որ դեռևս քրիստոնեությունից շատ առաջ հայերը գիտեին տառերի գրելու արվեստը, իսկ այսպես կոչված «Դանիելյան» տառերը, որոնք օգտագործել է Մաշտոցը հայոց այբուբենը ստեղծելիս, եղել են հայոց հին տառերը: Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո առաջին քարո-

զիչները՝ հույն և ասորի հոգևորականները, գործածության մեջ են մտցնում հունարենը և ասորերենը: Սակայն ժողովրդին խորթ էր օտար լեզվի և տառերի գործածությունը, և այսպես երկար չէր կարող շարունակվել: Հասունացել էր սեփական գիրն ունենալու պահանջը: Այդ խնդիրը հաջողությամբ իրականացնում է Մեսրոպ Մաշտոցը:

Գրքում ներկայացված է Մաշտոցի կատարած մեծ աշխատանքը հայկական տառերի ստեղծման, Հայաստանի տարբեր գավառներում դպրոցներ հիմնելու և մայրենի լեզվով հայ մանուկներին կրթելու գործում:

«Հայոց լեզվի և հայ գրականության ծաղկումը, - գրում է հեղինակը, - կապված է Սուրբ Գրքի թարգմանության հետ, որից հետո հայ դպրությունը, ընդարձակելով իր սահմանները, զբաղվեց պատմական, փիլիսոփայական և գիտական այլ հարցերով»:

Գրքում պարզաբանումներ են տրված նաև հայոց գրերի գյուտի տարբերակի և տեղի մասին, ինչը մինչ այդ ճշտված չէր: Ըստ հեղինակի, հայոց տառերի գյուտը տեղի է ունեցել 404 թվին Ասորեստանի Սամոսատ քաղաքում: (Ներկայումս ընդունված է համարել, որ հայոց գրերի գյուտը տեղի է ունեցել 405 թվականին):

Գրքի հավելվածում տեղ են գտել մի շարք հոդվածներ Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց և աղվանաց գրերի ստեղծման, Մաշտոցի վարած պաշտոնների, հայոց այբուբենի տեսակների և այլ հարցերի մասին:

1904թ. Հայոց գրերի 1500-ամյակի կապակցությամբ Ի.Հարությունյանը լույս է ընծայում «1500 տարի առաջ» գրքույկը, մասնակցում է Էջմիածնում և Թիֆլիսում կայացած տոնախմբություններին:

Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» գրքի հրատարակումից անցել է ավելի քան 110 տարի: Այդ ընթացքում բազմաթիվ գրքեր են հրատարակվել հայոց գրերի գյուտի և Մեսրոպ Մաշտոցի մասին: Իսահակ Հարությունյանի աշխատությունը արժեքավոր է նրանով, որ առաջին անգամ արևելահայերենով ներկայացվեց այդ մեծ հայտնագործության պատմությունը:

Այս գիրքը մեր օրերում էլ չի կորցրել իր գիտական և պատմական արժեքը:

Հայրապետ ՇԱՏՎՈՐՅԱՆ

ՊՍԿՈՎ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՅՎԵՑ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հոկտեմբերի 16-ին Պսկով քաղաքի թիվ 14 հանրակրթական դպրոցի շենքում բացվել է կիրակնօրյա հայկական դպրոց: Այս իրադարձությունը մեծ ոգևորություն է առաջացրել տեղի հայ համայնքում:

Ավելի քան 30 մանկահասակ հայորդիներ այդ օրը դարձել են կիրակնօրյա դպրոցի սաներ: Այդ նպատակով Սանկտ-Պետերբուրգում Հայաստանի գլխավոր հյուպատոսության աջակցությամբ Հայաստանից առաքվել են անհրաժեշտ քանակի այբբենարաններ, դասագրքեր, մատյաններ:

Ողջույնի խոսքում Սանկտ-Պետերբուրգում Հայաստանի գլու-

խավոր հյուպատոս Ռ. Հակոբյանը շնորհավորել է աշակերտներին, ծնողներին, հայ համայնքի ներկայացուցիչներին մտան ազգօգուտ գործի համար՝ խորհրդանշական համարելով այն փաստը, որ այս տարի հայ ժողովուրդը նշում է հայոց գրերի ստեղծման 1600- ամյակը: Գլխավոր հյուպատոսը հույս է հայտնել, որ մոտ ապագայում կիրակնօրյա դպրոցը կվերածի Պսկովի լիարժեք հայկական միջնակարգ դպրոց:

Դպրոցի բացմանը ներկա են եղել Պսկովի մարզի վարչակազմի կրթության վարչության աշխատակիցներ, հասարակայնության ներկայացուցիչներ:

«...ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ՀՈԳԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՂԸ ՄԻՏՔՆ Է»

Եղիշե

Կատարյալ փիլիսոփան բնորոշվում է այս երեք առանձնահատկություններով՝ բարությանը, իմաստությանը և կարողությանը: Նրան հատուկ է բարությունը, որովհետև ինչպես Աստված հոգ է տանում բոլորի մասին, այնպես և կատարյալ փիլիսոփան հոգ է տանում անկատար հոգիների մասին՝ հաղորդելով նրանց կատարյալ գիտություն: Նրան հատուկ է իմաստությունը, որովհետև ինչպես Աստված ամենագետ է, այնպես և կատարյալ փիլիսոփան ձգտում

է ամեն ինչ իմանալ և գիտե այն, ինչ օգտակար է: Նրան հատուկ է նաև կարողությունը, որովհետև ինչպես Աստված կարող է իրագործել պատշաճ ձևով այն ամենը, ինչ որ կամենում է, նույնպես և կատարյալ փիլիսոփան կարող է անել իր ուժերի սահմաններում այն, ինչ կամենում է, բայց նա երբեք չի ցանկանա այն, ինչ իր ուժերից վեր է:

Դավիթ ԱՆՅԱՂԹ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ 1600-ԱՄՅԱԿԸ 1600-ԱՄՅԱԿՆ Է ՆԱԵՎ ՀԱՅՈՑ ՈՍԿԵԴԱՐԻ

«Արեգնածին» գրական ակումբի ավանդական հրավերն էր Ավետիք Իսահակյանի հարկի տակ «Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ» բանաստեղծական տողի ճշմարտության խորհրդով: Բարության և իմաստության, նաև կարողության, ինչպես ավանդված է մեզ մեր ոսկեդարից: Դավիթ Անհաղթի փիլիսոփայությանը աստվածային զորության մարդկային բանաստեղծական զորության չափանիշների մեջ:



2005թ. ուստարին Հայոց ցեղասպանության 90-րդ տարին է, որ տասնամյակներ է լինելիության հայ բանաստեղծների հորբելյանների հանդիսություններով, թրի դեմ գրիչ ազգային նկարագրի առաքելությանը: Դանիել Վարուժանի կամքն ու կրողով էր համը լռության և կույր ոչնչին դիմավայել: Աստվածային արարչագործ, ստեղծագործ միտքը նվաճում է ապագայի հորիզոններ: Վարպետի հարկի տակ երևանի թիվ 10, 16, 35 դպրոցների սաներն էին իրենց ուսուցիչների և ծնողների հետ: Եվել էին ունկնդիրը լինելու Խաչատուր Աբովյանի պատգամների, Վահան Տերյանի քնարական խոսքի և Իսահակյանի «Երջանկության իմաստը» գրույցի, քանզի «բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ» տիեզերական անհունության ժամանակի մեջ մեր կենսակերպի դերն ու նշանակությունը:

Աշխարհում քիչ ազգեր կան, որ ոսկեդար են ունեցել: Այն մեր գրերի գյուտի արգասիքն է: Մեր մատենագիտության ստեղծումը հայ ինքնության հոգևոր ծարտարայեղությունն է: Հայ հոգևոր երգը ստեղծվեց, փիլիսոփայությունը, որը թեև մեր ազգը մինչ այդ, անշուշտ, ունեցել է,

բայց ոչ մի տեղ չէր արձանագրված: Ոսկեդարում մենք փիլիսոփա ունեցանք, որը անհաղթ մնաց: Նա ստացավ Անհաղթ պատվանունը: Տարվա մեջ փիլիսոփաներից նրան էր շնորհվում այդ կոչումը, ով մի քանի տարի անընդմեջ որպես անգուգական կանգնում էր բարձր պատվանդանին: Այս պատիվը ուներ Դավիթ Անհաղթ վարդապետը, որը միշտ Աթենքի պատվանդանին էր կանգնել որպես տարվա թիվ առաջին իմաստասեր:

Մենք ստեղծեցինք գիր և 20-30 տարի հետո թարգմանեցինք Աստվածաշունչը, որը կոչվեց թագուհի թարգմանչություն:

Մեր թարգմանական ոսկեդարի 1600-ամյակն է նաև:

Աշխարհում շատ քիչ ժողովուրդներ կան, որ 1600 տարի Թարգմանչաց տոն ունենան և թարգմանիչներ սրբացած: 16 դար արդեն տարին երկու անգամ մենք նշում ենք մեր թարգմանիչների հիշատակի օրը: Համաձայն եկեղեցական տոնացույցի՝ Օշականում հուլիսի առաջին հինգշաբթին տոնն է Ս. Սահակի և Ս. Մեսրոպի: Երկրորդ թարգմանչաց տոնը հոկտեմբեր ամսի առաջին շաբաթ օրն է՝ դարձյալ Օշականում է տոնախմբվում՝ Սրբոց Թարգմանչաց վարդապետանց մերոց: Տոնացույցի

մեջ նշվում է ընդամենը 6 անուն՝ Մաշտոց, Խորենացի, Եղիշե, Դավիթ Անհաղթ, Նարեկացի, Ծնորհալի: Թարգմանչաց այս 2-րդ տոնը նվիրված է հայ նշանագրերի գյուտին և Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը: Երկու խմբի են բաժանվում Ոսկեդարի մեր թվով հարյուրից ավելի թարգմանիչները՝ ավագ թարգմանիչների և կրտսերների: Ս. Սահակը ունեցել է 60 աշակերտ, իսկ Մաշտոցը՝ 50 աշակերտ: Նրանք եղել են Հայաստան աշխարհի ամենաընտրյալ երիտասարդները: Նրանցից էլ ընտրվել են լավագույնները, որոնք արդեն պատրաստվածություն ունեին և Վաղարշապատում որոշ ուսումնառությունից հետո ուղարկվեցին Եդեսիա, Համիդ, Աթենք, Միջագետքի կարևոր կենտրոններում եղան, և ամեն մեկը հանձնարարություն ուներ. ոչ միայն թարգմանչական, այլև երաժշտագիտական, փիլիսոփայական, պատմագրության և բանաստեղծության և արվեստի այլ բնագավառների մեջ էին խորացել նրանք և իրականցրին այնպիսի թարգմանություններ, որոնք մեծ նշանակություն ունեցան ոչ միայն մեզ, այլև ողջ քաղաքակիրթ մարդկության համար: Հույն և ասորի եկեղեցական հայրերի երկերի մայր օրինակները շատ շուտով անհայտացել են և որպես բնօրինակային արժեք դիտվել են 5-րդ դարի հայերեն լեզվով մեր թարգմանությունները:

Հայոց ոսկեդարի 1600-ամյակը տոնախմբություն է միաժամանակ համայն մարդկության համար:

Խորեն ՊԱՆՅԱՆ

ԿԻԵՎԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Օրերս Կիևի N 85 միջնակարգ դպրոցում կայացավ հայկական դասարանի բացման արարողություն, որին մասնակցում էին Ուկրաինայում ՀՀ դեսպանության աշխատակիցները, Հայ Առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի հոգևորականները, Կիևի հայ համայնքի ներկայացուցիչները, հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Կիևի N 85 միջնակարգ դպրոցում այսուհետ պաշտոնապես կգործի հայկական դասարան, որում ընդգրկված հիմնականում հայազգի 35 աշակերտներին շաբաթը մեկ անգամ կդասավանդվի հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն և աշ-

խարհագրություն: Վերոհիշյալ առարակաները կներառվեն նրանց ավարտական փաստաթղթերում՝ համապատասխան թվանշաններով:

ՀՀ դեսպանությունը դպրոցի գրադարանին հանձնեց հայերեն դասագրքեր, իսկ Կիևի հայ համայնքը դպրոցին նվիրեց հեռուստացույց և DVD տեսամագնիտոֆոն:

Դպրոցի տնօրենը ներկաներին տեղեկացրեց Երևանի Չեխովի անվան դպրոցի հետ համագործակցություն ծավալելու պայմանավորվածության մասին:

Նապոլեոն ՀԻԼԼ

ՄՏԱԾԻՐ ԵՎ ՀԱՐՍՏԱՑԻՐ

Սկիզբը № 9-10(77-78) համարներում

Հարստության տանող առաջին քայլը:

Ցանկություն

Երազանքներն իրականանում են, երբ որ ցանկությունը վե-

Յիսուն տարի առաջ, երբ էղվին Ս. Բարնսը Նյու Ջերսի նահանգի

Դա հույս չէր: Ոչ էլ՝ ձգտում: Այլ ամեն ինչ գերակշռող, այրող մի

Բարնսը կանգնած էր նորից էդիսոնի առջև նույն գրասենյակում,

Բարնսը հասավ հաջողության, քանի որ ընտրել էր մի որոշակի

Նահանջ չկա

Այդ երկու հանդիպումների միջև ընկած էր հինգ տարի: Բոլորի

Նա չէր ասում. «Ես ինձ հաշիվ եմ տալիս, որ հնարավոր է չկարո-

Նա նահանգի ճանապարհ չէր թողնում: Նա կամ պիտի հաղթեր,

Ահա, իրականում, Բարնսի հաջողության ողջ պատմությունը:

Եվ նա այրեց բոլոր կամուրջները

Շատ տարիներ առաջ մեծահոջակ մի զորավար հայտնվել էր

Նա, ով ունի հաղթելու ձգտում, այդպես պիտի այրի իր ետևից

ջողության ամենակարևոր գրավականը: ...Մի առավոտ, Չիկագոյի մեծ հրդեհից հետո վաճառականների

«Պարոնայք, հենց այս տեղում ես պիտի կառուցեմ աշխարհի

Այս դեպքը կատարվել է մոտ հարյուր տարի սրանից առաջ:

Մյուս օրից, երբ մարդ սկսում է հասկանալ փողի նշանակու-

Այն օրից, երբ մարդ սկսում է հասկանալ փողի նշանակու-

Միայն որոշակի արժեք ստացած հարստության տենդագին

Գաղափարները փողի վերածելու

վեց փուլերի մասին

Դուք ցանկանո՞ւմ եք փող ունենալ: Ներքոհիշյալ վեց խոր-

1. Ճշգրիտ որոշեք փողի այն քանակությունը, որը դուք կուզեք

2. Անկեղծորեն խոստովանեք ձեզ՝ ինչ եք պատրաստ զոհաբե-

3. Նախանշեք այն ժամկետը, որի ընթացքում դուք արդեն պի-

4. Կազմեք ձեր ցանկություններին հասնելու կոնկրետ մի ծրա-

5. Մի թղթի վրա գրեք ամեն ինչը. փողի քանակը, այն ժամանա-

6. Ամեն օր՝ քնելուց առաջ և արթնանալուց անմիջապես հետո

Շատ կարևոր է հետևել այդ վեց խորհուրդներին, և առավելա-

Սկզբունքներ՝ հարյուր միլիոն

դոլլարի արժողությամբ

Նրանց, ովքեր սովոր չեն մարզելու իրենց միտքը, այս խոր-

հետաքրքիր կլինի թերևս իմանալ, որ իրենց ուղեղում ձևավորված մտքերը տողերիս հեղինակը ժամանակին ստացել է Եղորյու Կարնեգիից: Այո, Կարնեգիից, որը սկսել է իր ճանապարհը մետալուրգիական գործարանի բանվորից և կարողացել է, չնայած անհաջող մեկնարկի, իր սկզբունքներից կորզել-ստեղծել մի հարստություն, որ չափվում է այսօր հարյուրավոր միլիոն դոլարներով:

Պետք է ասել նաև, որ այդ սկզբունքներին թերևս հավանություն կտար նաև Թոմաս Ա. Էդիսոնը, քանի որ այնտեղ ձևակերպված է ոչ միայն փող կուտակելու իմաստի էությունը: Դրանց օգնությամբ առհասարակ հնարավոր է հասնել ցանկացած նպատակի:

Այդ սկզբունքները մարդուն կոչում են ոչ թե «սքեմայան աշխատանքի», այլ ուղղակի ինքնագոհաբերման: Ձեզանից չի պահանջվում դառնալ ծիծաղելի կամ էլ կույր հավատավոր: Այդ սկզբունքների իրականացման համար ոչ էլ պահանջվում է ինչ-որ բարձրակարգ կրթամակարդակ: Պետք է կարողանալ ստիպել աշխատելու ձեր դատողությանը, հասկանալ, որ փողի կուտակումը պատահականությամբ կամ էլ բախտի բերումով չի լինում: Հիշեք. այս դարում մեծ կարողություն կուտակած մարդիկ չարչարվել և հուսացել են շատ երկար, ձգտել են, ցանկացել են, կառուցել են ծրագրեր՝ մինչև որ հարստությունը սկսել է հոսել դեպի իրենց:

Եվ էլի մի բան. դուք երբեք չեք հարստանա, եթե փողի կիրքը չհասցնեք ձեր մեջ «եռման աստիճանի», եթե չհավատաք ձեր նպատակին՝ ինչպես ինքներդ ձեզ:

Երեկ՝ մեծագույն երազանքներ - վաղը՝ մեծ հարստություն

Մենք՝ հարստության մրցավազքի մասնակիցներս, ապրում ենք մշտապես փոփոխվող մի աշխարհում: Այդ աշխարհը համառորեն պահանջում է մեզանից նորանոր մտքեր և մտահղացումներ, նոր մոտեցումներ, նոր առաջնորդներ, հայտնագործություններ, կրթության և գործավարման ձևեր, նոր գրքեր և սցենարներ հեռուստատեսության և կինոյի համար: Եվ ողջ այդ մրցավազքում, ողջ այդ նորացման և կատարելագործման պայքարում հաղթում է նա, ով ունի որոշակի նպատակամղվածության և հաջողության հասնելու այրող ցանկություն:

Մենք, հարստություն կուտակել ցանկացողներս, պիտի հիշենք, որ այս աշխարհում իսկական առաջնորդներ դարձել են միայն նրանք, ովքեր կարողացել են նկատել և իրենց նպատակին ծառայեցնել դեռևս աննշարելի ուժերը և աննկատելի հնարավորությունները՝ դարձնելով դրանք երկնաքեր կառույցներ, քաղաքներ, ֆաբրիկաներ, թռչող իսպրատներ և մեքենաներ և մարդու կյանքը գեղեցկացնող ու փափկացնող այլևայլ հարմարություններ ու սարքավորումներ:

Ոչինչ չպիտի խանգարի ձեր ձգտմանը: Դուք պիտի հոգեկան հաղորդակցություն ապրեք անցյալի մեծ առաջնորդների հետ, որոնց պարտական է ամերիկյան քաղաքակրթությունը իր այսօրվա կենսունակությամբ ու նրանում տաղանդների կայացման լայն հնարավորություններով:

Եթե այն, ինչին որ դուք ձգտում եք՝ լավն է, և դուք հավատում եք դրան, ապա մի կողմ թողեք բոլոր տեսակի կասկածները և ուղղակի անցեք գործի: Ու կարևոր չէ, թե ինչ կասեն ուրիշները, եթե ձեզ պատի անհաջողությունը: Նրանց անհայտ է այն ճշմարտությունը, որ ամեն մի անհաջողություն իր մեջ կրում է ապագա մեծ հաջողության սերմերը:

Թոմաս Էդիսոնը երազում էր էլեկտրական լամպի մասին: Նա միանգամից անցավ փորձարկումների և երբեք չնահանջեց իր դիրքերից՝ չնայած այդ ճանապարհին պատահած տասնյակ հազարավոր ձախողումների ու անհաջողությունների, մինչև որ իր երազանքը չստացավ որոշակի ռեալ նախանշաններ: Երգող-գործունյաները գործել երբեք կիսատ չեն թողնում:

Ուելան երազում էր ծխախոտի խանութների ցանց ստեղծելու մասին, և այսօր ամբողջ Ամերիկայով մեկ ամեն մի փողոցի անկյունում նրա խանութն է:

